

Հրամանաւ ծայրագոյն քահանայապետին եւ մեծաշուք հայրապետի՝ Տեառն Աստուածատրոյ Սրբազան Կաթողիկոսին Ամենայն Հայոց եւ Հրաւիրմամբ բոլոր արամեանս գրոհից, եմուտ ի գերութիւն եւ ի ծառայութիւն աստուածաբնակ Տաճարի եւ մեծի Աթոռոյ Սրբոյն Յակոբայ: Որք եւ այժմ աւասիկ կամք ի պաշտօն ծառայութեան Տեառն Զօրութեան Տանն Սրբոյ՝ կապեալք առ միմեանս հոգւով եւ մարմնով եւ եղեալք ողորմելոյ արժանի վասն փրկութեան Սրբոյ Աթոռոյն:

Եւ յայժմ ամի, որ էր թիւն ՌՃԿԸ (= 1719) ազգն Դաղմատացւոց (= լատինաց) եւ Յունաց առին Հրաման ի թագաւորէն նորոգել զհնութիւն աշխարհակեցոյց Տաճարի, Սրբոյ Յարութեան Քրիստոսի. բնդ որս եւ մեր բնկալեալ զնոյն Հրաման նորոգել բնդ վերոյիշեցեալ ազգացն զբաժինն մեր ի նոյն Սուրբ Յարութեան Տաճարին, որ կայ այժմ ի շինման եւ ի նորոգման:¹

Եւ մինչ սկսաք ժողովել ողորմութիւնս ի բարեպաշտից տեղւոյս վասն դործոյ նորոգութեան Սրբոյ Տաճարին՝ Յունիսի ԻԳ (= 23) յանկարծ հանդիպմամբ ի մէջ գիշերի անկաւ Հրայրեցութիւն ի Կէտիկ Փաշա կոչեցեալ սահման քաղաքիս եւ յառաջս բազումս բաժանեալ այրեաց զբազում տեղիս եւ զբնակութիւնս. մանաւանդ զողորմելի ազգիս մերոյ ջրնջեաց զբազում տունս եւ կապեաց զամենեսեան յաղքատութեան որպէս յերկաթս. որ եւ ի վերայ այսց դառնութեանց այրեաց զբաղմամարդ եւ զհոգեւոր եկեղեցի սրբուհւոյ Աստուածածնին եւ խաւարեցոյց զլուսատու տկն մեր: Բայց որ էհարն զմեզ ըստ մերս մեղանաց, ողորմե-

տրիարդ, եղև Բէլ Դաբէ Եւ Դաբէ Եւ Դաբէ Եւ Դաբէ Եւ Դաբէ (էջ 122-123): Եւ քանի որ պատրիարքութիւնը կը նշանակէ 1715 Սեպտեմբեր, 1713 Փետրվարին, սկսած կ'ըլլայ Կոլոտին իբր «Աթոռակալ եւ վեհել» պաշտօնը:

¹ Հմմտ. Հաննէ էջ 126, 128: